ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Տարեկան հաշվետվություն

2012





2012 թվականի դեկտեմբերին վաճառվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամի 1 միլիոներորդ օրինակը[1]

[1] *Մանրամասները ներկայացված են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «ՀՀ ներդրումային դրամներ» բաժնում՝ www.cba.am:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուղերձ 6

Կառավարում և հաշվետվողականություն 10

ՀՀ ԿԲ առաքելությունը և խնդիրները 10
ՀՀ ԿԲ կառավարումը 12
ՀՀ ԿԲ հաշվետվողականությունը 19
ՀՀ ԿԲ կառուցվածքը 20

Ռազմավարական ուղղությունների ամփոփում 22
Դրամավարկային քաղաքականություն 24

Միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը 28
Վիճակագրություն 30

Ֆինանսական կայունություն, կարգավորում և վերահսկողություն 32

Վճարահաշվարկային համակարգ 38
Կանխիկ դրամաշրջանառություն 40

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար 45
Կառավարում և կազմակերպչական զարգացում 50

Կառավարման համակարգերի բարելավում 50
Անձնակազմի կառավարում 52
Միջազգային համագործակցություն 57

Հասարակայնության հետ կապեր 62

Այցելուների կենտրոն 63

Ռիսկի կառավարում և աուդիտ 65

Ներքին աուդիտ 65

ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն 69



ՈՒՂԵՐՁ »

Հարգելի ընթերցող

Ձեզ ենք ներկայացնում 2012 թվականի տարեկան հաշվետվությունը: Այն համառոտ ամփոփում է տարվա ընթացքում գների և ֆինանսական կայունության ապահովման, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի առջև դրված այլ խնդիրների իրագործման արդյունքները[2]:

Տարին հաջող էր թե՛ գների կայունության, թե՛ ֆինանսական կայունության առումով:

2012 թվականի կարևորագույն ձեռքբերումներից մեկը մակրոտնտեսական կայունության ապահովումն էր, որը բարենպաստ միջավայր է ստեղծել առաջիկա տարիների տնտեսական աճի համար: Հաշվետու տարում արձանագրվել է 3.2% գնաճ. ուղղորդված քաղաքականության և հասարակության շրջանում գնաճային սպասումների խարսխման շնորհիվ ՀՀ կենտրոնական բանկին հաջողվել է գնաճը կայունացնել նպատակային ցուցանիշի շուրջ:

Մակրոմիջավայրի կայունացումը դրական ազդեցություն ունեցավ նաև ֆինանսական համակարգի կայունության ամրապնդման վրա: Հայաստանի ֆինանսական համակարգը, լինելով ոչ մեծ, բայց դինամիկ զարգացող, արդեն իսկ ապացուցել է ցնցումներին դիմակայելու իր ունակությունը: 2012 թվականը հատկանշական էր տնտեսության իրական և ֆինանսական հատվածների ինտեգրման բարձր տեմպերով: Ֆինանսական համակարգի ակտիվների մեծությունը տարեվերջին կազմել է համախառն ներքին արդյունքի 68%-ը, իսկ վարկերի մեծությունը՝ 41%-ը, որոնք 2011 թվականի համեմատ ավելացել են 9-ական տոկոսային կետով:

» *[2] 2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության վերաբերյալ մանրամասն տե՛ս «Գնաճի հաշվետվություն», «Ֆինանսական կայունության հաշվետվություն» և «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» պարբերականներում:*

Հաշվետու տարում Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում իրականացվել է «Ֆինանսական համակարգի գնահատման ծրագիրը»: Ծրագրի առաքելության կողմից ամփոփվել են Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության գնահատականները և տրվել արժեքավոր առաջարկներ, որոնց զգալի մասն արդեն իսկ իրագործվել է: Առաքելության կողմից Հայաստանի ֆինանսական համակարգին և կայունության ապահովման գործընթացներին տրվել են գոհացուցիչ գնահատականներ (ըստ գնահատականների՝ Հայաստանի բանկային համակարգը բավականին կայուն է և ունակ՝ դիմակայելու հնարավոր ցնցումներին, իսկ ՀՀ կենտրոնական բանկում ներդրված է արդյունավետ վերահսկողական համակարգ, ինչպես նաև ճգնաժամերի կառավարման կենսունակ մեխանիզմ):

Ընդհանուր առմամբ, 2012 թվականին Հայաստանի ֆինանսական համակարգի մասնակիցները ապահովել են դրական ֆինանսական արդյունքներ:



Կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



yerevan 2012

2012 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը ճանաչվել է գրքի 12-րդ համաշխարհային մայրաքաղաք: Այդ կապակցությամբ Կենտրոնական բանկը թողարկել է «Հայ գրքի տպագրության 500-ամյակին» նվիրված արծաթե հուշադրամ [3]

[3] *Բոլոր հուշադրամների վերաբերյալ մանրամասները ներկայացված են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «ՀՀ հուշադրամներ» բաժնում՝ www.cba.am:*

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը գների կայունության ապահովմանն ուղղված միջոցներ է ձեռնարկում, մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկի առաքելությունն է՝

ա) լինել միջազգայնորեն ճանաչված՝ որպես անկախ, դինամիկ զարգացող, հեղինակավոր, թափանցիկ, գիտելիքին միտված, միջազգային ֆինանսական համակարգի զարգացման միտումներին հետևող արդյունավետ կառույց.

բ) պահպանել տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդելու ինստիտուցիոնալ կարողությունները.

գ) մշտապես աջակցել երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը՝ տնտեսական մարտահրավերներին դիմակայելու գործում լինելով ՀՀ Կառավարության կարևոր գործընկերը:

Կենտրոնական բանկի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

բ) գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը.

գ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.

դ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.

ե) արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

զ) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

ա) իրականացնում է դրամային շուկայում տոկոսադրույքների և դրամային իրացվելիության կառավարման գործառույթները.

բ) հանդիսանում է վերջին ատյանի վարկատու.

գ) իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը, ինչպես նաև հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն.

դ) իրականացնում է բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների և ֆինանսական համակարգի այլ մասնակիցների լիցենզավորումը, դրանց գործունեության կարգավորումն ու վերահսկումը՝ որպես միասնական վերահսկողություն իրականացնող մարմին.

ե) կառավարում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.

զ) իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.

է) իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

ը) իրականացնում է շուկայական վարվելակերպի կարգավորման և վերահսկողության, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը նպատակաուղղված աշխատանքներ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից, խորհրդի հինգ անդամներից: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը Կենտրոնական բանկի խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե: Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը *Կենտրոնական բանկի նախագահն* է: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՀ նախագահի առաջարկությամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահը համակարգում է Կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով Կենտրո-նական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է *Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը,* իսկ տեղակալի բացակայության կամ նրա պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի՝ տարիքով ավագ անդամը: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը, ինչպես նաև խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք՝ բացառությամբ գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքի:

Կենտրոնական բանկի խորհրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոն զբաղեցնել:




Կենտրոնական բանկի խորհուրդ

Խորհրդի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ՝ երեքշաբթի օրը՝ ըստ յուրաքանչյուր տարվա առաջին Խորհրդի նիստի ժամանակ տվյալ տարվա համար հաստատված ժամանակացույցի: Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, նրա տեղակալի կամ Խորհրդի երեք անդամի նախաձեռնությամբ:

Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է Կենտրոնական բանկի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը, Կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույքները, Կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները, ընդունում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը, հաստատում է բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2012 թ. գումարվել է Կենտրոնական բանկի խորհրդի 50 նիստ և ընդունվել է 378 որոշում, որից 92-ը նորմատիվային որոշումներ են (ֆինանսական համակարգի գործունեությունը կարգավորող կանոնակարգերի հաստատման, կարգերում փոփոխությունների և լրացումների կատարման (73 որոշում), Կենտրոնական բանկի կողմից հուշադրամների և դրամանիշերի շրջանառության մեջ դնելու (10 որոշում), կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական, վարկային, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, հաշվետու թողարկողների, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության գործունեությունը կարգավորող նորմատիվ ակտերի սահմանման, ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց, թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հաշվետվական ձևերի, «Համահայկական բանկի», բանկային տոկոսի հաշվարկային դրույքի մասին (9 որոշում), 286-ը՝ անհատական (դրամական փոխանցումներ իրականացնելու և վճարա-

հաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու (47 որոշում), ֆինանսական շուկայում Կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների (14 որոշում), Կենտրոնական բանկի կողմից թողարկվող հուշադրամների ուրվագծերը հաստատելու (4 որոշում), արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա տրամադրելու կամ ուժը կորցրած ճանաչելու (82 որոշում), բրոքերային-դիլերային գործունեություն իրականացնելու լիցենզիա տրամադրելու (3 որոշում), գրավատների (47 որոշում), վարկային կազմակերպությունների (3 որոշում), ապահովագրական և ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների (15 որոշում), «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (6 որոշում), Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և վերստուգիչ խմբի (10 որոշում) մասին և 55 այլ որոշումներ):

Խորհուրդը՝ որպես քաղաքականություն հաստատող մարմին, կատարել է ֆինանսական համակարգի կայունացմանն ու զարգացմանը միտված օրենսդրական ու նորմատիվային դաշտի բարելավման զգալի աշխատանք: Ազգային ժողովի հավանությանն են արժանացել և ընդունվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից առաջարկված մի շարք օրենսդրական փոփոխություններ (մանրամասն տե՛ս «Ֆինանսական կայունություն, կարգավորում և վերահսկողություն» բաժնում):

Կենտրոնական բանկի վարչություն

Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ՝ Խորհրդի հերթական նիստերի գումարման օրվան հաջորդող երեքշաբթի օրը:

Վարչության նիստերը վարում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը:

Վարչության անդամների կողմից խորհրդի նիստում քննարկվելիք հարցերը ներկայացվում են Կենտրոնական բանկի վարչություն:

2012 թ. գումարվել է Կենտրոնական բանկի վարչության 14 նիստ:

Կենտրոնական բանկի հանձնաժողովներ և կոմիտեներ

Կենտրոնական բանկի կառավարման կարևորագույն տարրերից են նաև բանկում գործող հանձնաժողովները, կոմիտեները և այլ խորհրդակցական մարմինները, որոնց կազմը և լիազորությունները

սահմանվում են ըստ քննարկվելիք հարցերի շրջանակի և գործունեության ոլորտների: Կենտրոնական բանկի հանձնաժողովների և կոմիտեների նիստերի արձանագրությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի կողմից, իսկ որոշ դեպքերում, դրանց արդյունքում, Կենտրոնական բանկի նախագահը կայացնում է որոշումներ և տալիս կարգադրություններ: Ստորև ներկայացվում են Կենտրոնական բանկում գործող կոմիտեներն ու հանձնաժողովները, ինչպես նաև դրանց աշխատանքի արդյունքներին վերաբերող տեղեկություններ:

Մշտապես գործող կոմիտեներից և հանձնաժողովներից բացի, Կենտրոնական բանկի նախագահի հրահանգով և Խորհրդի որոշմամբ ձևավորվում են նաև ժամանակավոր հանձնաժողովներ՝ ելնելով որոշակի խնդիրների և նպատակների կատարման անհրաժեշտությունից:

Դրամավարկային քաղաքականության կոմիտե

Դրամավարկային քաղաքականության կոմիտեն քննարկում է նախորդ շաբաթվա դրամավարկային քաղաքականության ընթացքը, բանկային համակարգում, ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակը, Կենտրոնական բանկի կողմից իրականացված գործառնություններին, ինչպես նաև դրամավարկային և պետական բյուջեի հետ փոխհարաբերություններին առնչվող ցուցանիշները:


ԴՔ կոմիտեն քննարկում է նաև Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ նախորդ տասնօրյակում գնաճի գնահատումների վերաբերյալ դիտարկումների արդյունքները:

Կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում՝ յուրաքանչյուր ուրբաթ: 2012 թ. գումարվել է Դրամավարկային քաղաքականության կոմիտեի 47 նիստ:

Ֆինանսական կայունության հանձնաժողով

Ֆինանսական կայունության հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահին կից խորհրդակցական մարմին է, որը գնահատում է ֆինանսական համակարգի կայունությունը, քննարկում, նախապատրաստում է դրա ապահովմանը նպատակաուղղված միջոցառումները, ներկայացնում իրականացման ուղղությունների կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կատարում է իրավիճակի բազմակողմանի վերլուծություն:

Հանձնաժողովի հերթական նիստերի ժամանակ քննարկվում են նախորդ եռամսյակի ընթացքում համաշխարհային տնտեսությունում, ՀՀ մակրոմիջավայրում և ֆինանսական շուկայում,



ֆինանսական հաստատություններում և ենթակառուցվածքներում ռիսկերի զարգացման ուղղությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա երկրորդ կեսի ընթացքում: Արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի բանավոր որոշման հիման վրա:

2012 թ. գումարվել է ֆինանսական կայունության հանձնաժողովի 4 նիստ:

Ներդրումային հանձնաժողով

Ներդրումային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում որոշումներ կայացնելու իրավասություններ ունեցող մարմին է, որը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջազգային պահուստների կառավարման վերաբերյալ Խորհրդի որոշումներին համապատասխան, իրականացնում է միջազգային պահուստների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառույթներ, ինչպես նաև քննարկում է ներդրումային գործունեության ընթացիկ համակարգմանն առնչվող խնդիրներն ու ֆինանսական վերլուծության արդյունքները:

Նշված գործառույթներն իրականացնելու նպատակով հանձնաժողովը քննարկում է միջազգային պահուստների կառավարման ռազմավարական և մարտավարական, ինչպես նաև կառավարման ընթացիկ վերահսկողության խնդիրներ:

Հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, գումարվում են ամիսը մեկ անգամ:

2012 թ. գումարվել է Ներդրումային հանձնաժողովի 10 նիստ, ընդունվել է 8 որոշում:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցման և լիցենզավորման, բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գրանցման, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի, դրանց կանոնների գրանցման և այլ անձանց լիցենզավորման հետ կապված հարցեր:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:

2012 թ. գումարվել է Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի 63 նիստ:

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտե

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետի կարգավիճակով աշխատող աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով:

Կոմիտեի որոշումը խորհրդակցական բնույթ ունի, որի հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները երիտասարդ մասնագետների հետագա կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում Կենտրոնական բանկի նախագահին:

2012 թ. գումարվել է կոմիտեի 9 նիստ, գնահատվել են 34 երիտասարդ մասնագետներ:

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողովը գնահատում և դասակարգում է Կենտրոնական բանկի նոր կամ փոփոխվող աշխատատեղերը: Հանձնաժողովը քննարկում է Կենտրոնական բանկում նոր ստեղծվող կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատման և դասակարգման հետ կապված խնդիրները և ներկայացնում առաջարկություններ Կենտրոնական բանկի նախագահին: Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի աշխատակիցների անհատական աշխատանքային ծրագրերի կատարողականների վերաբերյալ վիճահարույց հարցերը: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 15-ը: 2012 թ. գումարվել է հանձնաժողովի 5 նիստ:

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողով

Հանձնաժողովն աշխատակիցների և դիմորդների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները կարող է ստուգել ինչպես հարցազրույցի, այնպես էլ գրավոր աշխատանքների միջոցով: Կենտրոնական բանկի նախագահը, ով միաժամանակ հանձնաժողովի նախագահն է, հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա կայացնում է որոշում.

- իր զբաղեցրած աշխատատեղին աշխատակցի մասնագիտական կարողությունների և գիտելիքների համապատասխանության վերաբերյալ,
- դիմորդի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ,
- աշխատակցի առաջխաղացման վերաբերյալ:

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողովի նիստերը գումարվում են՝ ստուգելու համար Կենտրոնական բանկի աշխատակիցների կամ Կենտրոնական բանկում աշխատելու ցանկություն ունեցող անձանց (դիմորդների) մասնագիտական և գործնական կարողություններն ու գիտելիքները:

2012 թ. գումարվել է հանձնաժողովի 34 նիստ:

Աուդիտ կոմիտե

Կենտրոնական բանկի աուդիտ կոմիտեն մասնագիտացված մարմին է՝ Բանկի կառավարման համակարգի կարևոր տարրերից մեկը: Կոմիտեի լիազորությունների շրջանակը ներառում է բանկի ֆինանսական հաշվետվության, ներքին հսկողության, արտաքին և ներքին աուդիտի հետ կապված հարցերն ու խնդիրները: Աուդիտ կոմիտեն բաղկացած է երեք անդամներից՝ ներառյալ Աուդիտ կոմիտեի նախագահը: Կոմիտեի անդամները Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ են: Տարվա ընթացքում տեղի է ունեցել Կոմիտեի 6 նիստ, քննարկվել և որոշումներ են կայացվել ավելի քան 25 հարցերի վերաբերյալ: Քննարկված հարցերի շրջանակն ընդգրկել է Վերստուգիչ խմբի հանձնառություններին, արտաքին աուդիտի աշխատանքներին, Կենտրոնական բանկի ներքին հսկողությանը և ռիսկերի կառավարման համակարգին, Վերստուգիչ խմբի ընթացիկ գործունեությանը, մեթոդաբանությանն ու ոլորտին վերաբերող մասնագիտական խնդիրներ:

Բացի թվարկված հանձնաժողովներից և կոմիտեներից, Կենտրոնական բանկի կորպորատիվ կառավարման գործում կարևոր նշանակություն ունեն ԿԲ բյուջետային հանձնաժողովը, Տեղեկատվական անվտանգության կոմիտեն, Տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով զբաղվող կոմիտեն, Մրցույթների անցկացման հանձնաժողովը, ԿԲ «Տնային էջի» զարգացման, տեղեկատվական քաղաքականության մշակման ու իրականացման խմբագրական խորհուրդը, ինչպես նաև Հետազոտական և վերլուծական աշխատանքները գնահատող խումբը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: ԿԲ-ն իր գործունեության հաշվետվողականությունը ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը» և «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (Գնաճի հաշվետվությունը)», ինչպես նաև Կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվն ու կապիտալ ներդրումների ծրագիրը, համապատասխան կատարողականները: Բացի Դրամավարկային քաղաքականության ծրագրից և Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունից (Գնաճի հաշվետվություն), Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն», «Ֆինանսական կայունության հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանբեր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» պարբերականները: Կենտրոնական բանկն իր հաշվետվողականությունն իրագործում է նաև պաշտոնական կայքէջի (www.cba.am) միջոցով, որտեղ տեղադրվում են Կենտրոնական բանկի ռազմավարական զարգացման տեսլականը, պարբերականների հերթական թողարկումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություններն ու մամլո հաղորդագրությունները, ԿԲ կառավարմանը, գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական համակարգին վերաբերող այլ տեղեկատվություն: Կենտրոնական բանկի հաշվետվողականության կարևոր տարրերից են նաև բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնց համապատասխանությունը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին յուրաքանչյուր տարի հավաստվում է միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ



2012 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է ոսկե և արծաթե հուշադրամներ Հայոց բանակի կազմավորման 20-ամյակի կապակցությամբ »

Ռազմավարական ուղղությունների ամփոփում

Ինչպես ամրագրված է 2012-2014 թթ. ռազմավարությամբ՝ Կենտրոնական բանկը՝ որպես անկախ կառույց և Հայաստանի Հանրապետությունում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում գների և ֆինանսական կայունության երաշխավոր, իր հիմնական նպատակն իրականացնելիս ձգտում է բարձր պահել ԿԲ հեղինակությունը՝ առաջնորդվելով տնտեսության կայուն զարգացման ապահովման, միջազգային շուկաներին ինտեգրվելու հեռանկարով, և կարևոր դերակատարում ունենալ տարածաշրջանի ֆինանսական ծառայությունների ոլորտում: 2012-2014 թթ. Կենտրոնական բանկի ջանքերն ուղղվելու են միջազգային լավագույն փորձի ներդրմանն ու կիրառմանը ֆինանսական հատվածում՝ ապահովելով վերջինիս բազմազանությունն ու համաչափ զարգացումը:

Կենտրոնական բանկի համար 2012 թ. առաջնային են համարվել հետևյալ խնդիրները.

Գների կայունության ապահովումը. 2012 թվականին գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո իրականացված դրամավարկային քաղաքականությունը ուղղվել է գների կայունության ապահովմանը և գնաճի նպատակային թիրախի շրջանակում հասարակության գնաճային սպասումների խարսխմանը՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով երկարատև ժամանակահատվածում կայուն տնտեսական աճի ապահովման համար: Տարվա արդյունքներով Կենտրոնական բանկը իրականացրել է իր հիմնական խնդիրը՝ տարեվերջին արձանագրվել է 12-ամսյա գնաճի 3.2% մակարդակ, ինչը, ամբողջ տարվա ընթացքում պահպանված ցածր գնաճային միջավայրի ու մի շարք գնաճային գործոններ հաշվի առնելու պարագայում, ապահովվել է չեզոք դրամավարկային ու լողացող արժութային քաղաքականությունների և դրամավարկային քաղաքականության թափանցիկության բարձր մակարդակի միջոցով:

Ֆինանսական կայունության ապահովումը. ֆինանսական կայունության ապահովման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը 2012 թվականին շարունակել է ճգնաժամի հետևանքների չեզոքացման, կարգավորման դաշտի և վերահսկողության կատարելագործման ու ֆինանսական միջնորդության ընդլայնման աշխատանքները: Հաշվետու տարում Հայաստանում էր Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի՝ «Ֆինանսական համակարգի գնահատման ծրագրի» առաքելությունը, որն ամփոփեց Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության գնահատականները և արդյունավետ առաջարկներ ներկայացրեց: 2012 թվականի ձեռքբերումներից է տնտեսության իրական և ֆինանսական հատվածների ինտեգրման բարձր տեմպը:

Ազգային արժույթի շրջանառության ապահովումը. իրականացված միջոցառումների արդյունքում անխափան բավարարվել է կանխիկ դրամի նկատմամբ տնտեսության պահանջարկը՝ ըստ անհրաժեշտ ծավալների, անվանական արժեքների կառուցվածքի, որակի և ժամկետների: Շարունակելով ՀՀ թղթադրամների շարքի նույնականացման և դրամանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման աշխատանքները՝ 2012 թ. շրջանառության մեջ են դրվել նոր նմուշի 5000, 10000 և 20000 դրամ անվանական արժեքներով թղթադրամներ: Հասարակության շրջանում ազգային, մշակութային և այլ արժեքների տարածման, հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարման նպատակով թողարկվել են հուշադրամներ և շրջանառու հիշատակային մետաղադրամներ: Կատարվել են Կենտրոնական բանկի հաճախորդների դրամարկղային սպասարկման գործառնությունների ավտոմատացման և կանխիկ դրամաշրջանառության վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համալիր աշխատանքներ: Միասնական տեղեկատվական համակարգը ստեղծելիս ներդրվել է միջազգային լավագույն փորձը, որի նպատակն է նվազեցնել կանխիկ դրամաշրջանառության համակարգում դրսևորվող ռիսկերը:


Ինստիտուցիոնալ զարգացումը. 2012 թվականին ավարտվել են «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի» շինարարական աշխատանքները: Կենտրոնը ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներով հագեցած համալիր է, որտեղ կիրականացվեն տնտեսական հետազոտություններ, միջազգային չափանիշներին համապատասխանող քաղաքականության մշակման արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված վերլուծություններ, ինչպես նաև տնտեսագիտության և ֆինանսների բնագավառներին առնչվող կրթական, տարածաշրջանային եւ միջազգային ուսումնական ծրագրեր՝ Կենտրոնական բանկի աշխատակիցների և հետազոտական, վերլուծական աշխատանքներ կատարելու մեծ ներուժ և հետաքրքրություն ունեցող երիտասարդների համար: 2012 թվականին Կենտրոնական բանկը վերակառուցել է նաև Դիլիջանի նախկին քաղաքային գրադարանի շենքը, որը վերածվել է «Գիտելիք՝ հանուն զարգացման» կենտրոնի, որտեղ գործելու են Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով կառավարվող գրադարանը և «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը:



Շուշիի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ Կենտրոնական բանկը 2012 թվականին թողարկել է ոսկե հուշադրամ »

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ »

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, որով Կենտրոնական բանկը իր մասնակցությունն է ունենում երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացմանը: Գների կայունությունը ենթադրում է գնաճի որոշակի մակարդակ, որը Կենտրոնական բանկի կողմից ընդունվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախը ամրագրվում է ինչպես ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում և Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, այնպես էլ կայուն զարգացման ծրագրերում (աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրեր) և պետական բյուջեի մասին օրենքներում: Կենտրոնական բանկը ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները: 2006 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկը անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարությանը, որի համատեքստում, որպես միջանկյալ նպատակ, գնաճի կանխատեսված մակարդակն է, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը Հայաստանի Հանրապետությունում ռեպո տոկոսադրույքն է (վերաֆինանսավորման տոկոսադրույք), որը սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ ըստ նախօրոք հայտարարված տարեկան ժամանակացույցի: Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները ուժի մեջ են մտնում սահմանմանը հաջորդող օրվանից[4]:



2012 թվականի համար սահմանված գնաճի թիրախի (4 ± 1.5%) ապահովմանն ուղղված հիմնական միջոցառումները նախանշվել են դրամավարկային քաղաքականության եռամսյակային ծրագրերում, իսկ դրա իրականացման փաստացի ընթացքը՝ գնաճի եռամսյակային հաշվետվություններում: 2012 թ. երկրորդ եռամսյակից սկսած, հաշվի առնելով ուսումնասիրված միջազգային լավագույն փորձը, հասարակության շրջանում արված հարցման արդյունքները և նպատակ ունենալով բարձրացնել արտաքին հաղորդակցման ու հրապարակայնության արդյունավետությունը՝ Կենտրոնական բանկը հաստատում և հրապարակում է նախորդ եռամսյակի

[4] *Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի կողմից թողարկվող «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն» եռամսյակային պարբերականում: Տե՛ս Կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am:*



դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունն ու հաջորդող եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը մեկ միասնական թողարկմամբ՝ «Գնաճի հաշվետվություն» պարբերականում:[5]


Հիմնական խնդրի իրագործումը

Դրամավարկային քաղաքականության 2012 թվականի ծրագրով նախատեսվում էր, որ 12-ամսյա գնաճը կդրսևորի համեմատաբար կայուն վարքագիծ՝ ողջ տարվա ընթացքում պահպանվելով տատանումների թույլատրելի միջակայքում: Այս սցենարի ներքո նպատակահարմար էր շարունակել չեզոք դրամավարկային քաղաքականության իրականացումը:

2012 թվականն աչքի է ընկել ձևավորված և ողջ տարվա ընթացքում պահպանված համեմատաբար ցածր գնաճային միջավայրով: Այսպես, ակնկալվող կայուն վարքագծի փոխարեն, 12-ամսյա գնաճն առաջին կեսին շարունակել է աստիճանաբար նվազել՝ հունիսի վերջի դրությամբ կազմելով 0.7%, իսկ երկրորդ կեսին աստիճանաբար բարձրացել է և տարեվերջին մոտեցել նպատակային ցուցանիշին՝ կազմելով 3.2% (միջին տարեկան ցուցանիշը՝ 2.5%): Գնաճային ցածր միջավայրի ձևավորմանը և 12-ամսյա գնաճի ցուցաբերած տարեկան նման վարքագծին բացառապես նպաստել են պարենային ապրանքների գների փոփոխությունները, որոնք բացատրվում են հետևյալ հանգամանքով. դեռևս 2010 թվականի կեսերից, երբ արձանագրվեց գյուղատնտեսության ճյուղի թողարկման ծավալների զգալի նվազում, տեղական արտադրության գյուղմթերքների գների սեզոնային ավելի քիչ նվազման ազդեցությամբ ձևավորվեցին 12-ամսյա գնաճի բարձր մակարդակներ: Այնուհետև, հաջորդ երկու տարվա ընթացքում, գյուղատնտեսության ճյուղի զարգացման (2011 թվականի տարեկան աճը՝ 13.7%, 2012 թվականի Կենտրոնական բանկի գնահատումը՝ շուրջ 10%) արդյունքում տեղական արտադրության գյուղմթերքների առաջարկված մեծ ծավալները հանգեցրել են դրանց գների շարունակական նվազմանը և առաջին կիսամյակում պատմական միջինից ցածր մակարդակների ձևավորմանը: Հետագայում, մինչև տարեվերջ այս գործոնի ազդեցության մարման պարագայում արդեն պարենային ապրանքների գների աճը հանգեցրել է 12-ամսյա գնաճի աստիճանական բարձրացման:

[5] *Տե՛ս Կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am:*

Եթե բացառենք 12-ամսյա գնաճի վրա գյուղատնտեսական ապրանքների գների մեծ անկման ազդեցությունը, 2012 թ. գնաճի վարքագիծը եղել է համեմատաբար կայուն, ինչն ակնհայտորեն արտացոլում է բնականոն գնաճի վարքագիծը




Ձևավորված բարձր տնտեսական աճի (տարեկան 7.2%) և ցածր գնաճային միջավայրում Կենտրոնական բանկը 2012 թ. ընթացքում անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսա-դրույքը (8%): Դա հիմնավորվում էր հետևյալ գործոններով. մայիս-հունիս ժամանակահատվածում դրամն արժեզրկվել էր, որն արդեն իսկ դրամավարկային պայմանների թուլացում էր, տարվա երկրորդ կեսին գնաճի վրա գյուղմթերքների գների նվազման ազդեցությունը վերանալու էր, և դրա արդյունքում 12-ամսյա գնաճը կբարձրանար, կանխատեսվող հորիզոնում արտաքին ու Հայաստանի Հանրապետության տնտեսությունների զարգացման հեռանկարում ակնկալվում էր թույլ գնաճային միջավայր: Միևնույն ժամանակ, հաշվի է առնվել նաև, որ 12-ամսյա բնականոն գնաճը տարվա ընթացքում մշտապես եղել է ընդհանուր գնաճի նպատակային ցուցանիշի սահմաններում:

2012 թվականին, միջբանկային շուկայում տոկոսադրույքների տատանումները հարթելու նպատակով, Կենտրոնական բանկը նվազեցրել է իր կողմից ներգրավվող ավանդի և լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքների միջև տարբերությունը՝ 6 տոկոսային կետից դարձնելով 3 տոկոսային կետ:

Տարվա ընթացքում քաղաքականության գործիքի տոկոսադրույքի անփոփոխ մակարդակի և իրականացված այլ միջոցառումների ազդեցության պարագայում ֆինանսական շուկայում տոկոսադրույքները որոշ չափով հարթվել են, և արձանագրվել է դրանց համեմատաբար կայուն վարքագիծ:

2012 թ. ԿԲ կողմից ներգրավված միջոցների և լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքների միջակայքի սեղմմանը զուգընթաց, ֆինանսական շուկայում կարճաժամկետ տոկոսադրույքների տատանումները համեմատաբար հարթվել են



Բարելավում և կատարելագործում

2012 թվականին շարունակվել են Կենտրոնական բանկի Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի (ԿՔՎՀ) կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, բարելավվել է հիմնական՝ Եռամսյակային կանխատեսումների մակրոմոդելը, ընդլայնվել է աջակցող և արբանյակ մոդելների ցանկը, որոնցից առաջինը նպատակաուղղված է մեկ տարվա հորիզոնով կանխատեսումների իրականացմանը, իսկ երկրորդը՝ հիմնական մակրոմոդելի պարզության և մակրոտնտեսական զարգացումների առավել մանրամասն ներկայացման ապահովմանը: Միևնույն ժամանակ, կանխատեսումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից, չափազանց կարևոր քայլ էր աջակցող և արբանյակ մոդելների ինտեգրումը հիմնական մակրոմոդելում:


2012 թվականին վերամշակվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ առաջարկի ներկայացման ու որոշման կայացման ընթացակարգը: Նոր ընթացակարգով, որը կկիրառվի 2013 թվականի հունվարից, նախատեսվում է տարվա ընթացքում նախկինում իրականացվող կանխատեսման 12 (ամսական) փուլի[6] փոխարեն անցկացնել 8 փուլ, որից 4-ը՝ կանխատեսումների և 4-ը՝ միջանկյալ թարմացումների: Այդ 8 փուլերից յուրաքանչյուրը կավարտվի Կենտրոնական բանկի խորհրդի կողմից քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմամբ և մամլո հաղորդագրության հրապարակմամբ, իսկ դրանցից 4-ին կհետևի Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակումն ու հրապարակումը: Նշված փոփոխության արդյունքում դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման և պարտադիր պահուստավորման ժամանակացույցները չեն համընկնում:

[6] *Կանխատեսման փուլը քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ յուրաքանչյուր որոշմանը նախորդող Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի մի փուլ է, որտեղ վերլուծվում և մշտադիտարկվում են անցած ժամանակահատվածում գնաճային միջավայրը պայմանավորող բոլոր գործոնները, այդ թվում՝ ՀՀ տնտեսության, համաշխարհային տնտեսության, միջազգային և ներքին ֆինանսական շուկաների զարգացումները:*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2012 թվականին ՀՀ միջազգային պահուստները նվազել են շուրջ 133.1 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 1799.4 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ միջազգային պահուստների մակարդակը





Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ միջազգային պահուստների ծավալի նվազման հիմնական գործոններն են եղել արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերը (շուրջ 239.6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք), ՀՀ ներբանկային շուկայում ԱՄՆ դոլարի զուտ վաճառքն ու հաճախորդների համար փոխարկումները (համապատասխանաբար՝ շուրջ 65.4 և 36.8 մլն ԱՄՆ դոլար) և ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկերի՝ արտարժույթով թղթակցային հաշիվների մնացորդների նվազումը (շուրջ 54.4 մլն ԱՄՆ դոլար), մինչդեռ պահուստների համալրման հիմնական աղբյուր են հանդիսացել ստացված վարկերը, փոխառություններն ու դրամաշնորհները (շուրջ 300.7 մլն ԱՄՆ դոլար):

Ըստ 2012 թվականի արդյունքների՝ զուտ արտաքին ակտիվները կազմել են շուրջ 1067.7 մլն ԱՄՆ դոլար:

2012 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել միջազգային պրակտիկայում արտարժութային պահուստներին ներկայացվող բոլոր պահանջներին, մասնավորապես, ՀՀ տնտեսության՝ հնարավոր արտաքին ցնցումները կլանելու կարողությունը հավաստելու տեսանկյունից: Այս համատեքստում, մի շարք ընդունված ցուցանիշների գծով ՀՀ միջազգային պահուստների մակարդակը գերազանցել է նվազագույն պահանջները: Մասնավորապես՝ երեք ամսվա ներմուծման ծածկույթ ապահովելու փոխարեն 2012 թվականին ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ հինգ ամսվա ծածկույթ, իսկ կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) ծածկույթ ապահովելու փոխարեն՝ գերազանցել են այս գումարն ավելի քան տասն անգամ:




2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով միջազգային պահուստների կառավարման իր ռազմավարությունը, որի շնորհիվ հնարավոր է եղել խուսափել դեռևս շարունակվող ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունից:

Ինչպես նշվեց, 2012 թվականին միջազգային ֆինանսական շուկայում պահպանվել է տոկոսադրույքների աննախադեպ ցածր մակարդակ, ինչը զարգացած երկրների կառավարությունների և կենտրոնական բանկերի խթանող քաղաքականության արդյունք էր:

2012 թվականի ամռան ամիսներին գերմանական, ֆրանսիական և բարձր վարկանիշ ունեցող եվրոպական որոշ այլ երկրների պետական պարտատոմսերի եկամտաբերությունները հատել են զրոյական մակարդակը, և գրանցվել է բացասական եկամտաբերություն: Այս միտումը փոխվել է շնորհիվ եվրոպական կենտրոնական բանկի ձեռնարկած միջոցառումների: Արդյունքում, արդեն 2013 թ. սկզբին, նշված պարտատոմսերի եկամտաբերությունները թեև ցածր, սակայն դրական էին:

ԱՄՆ և գերմանական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը



Ուշագրավ էին նաև զարգացած երկրների՝ կառուցվածքային բնույթի խնդիրների լուծմանն ուղղված աննախադեպ քայլերը, մասնավորապես՝ Եվրոգոտու, ԱՄՆ-ի և Ճապոնիայի կառավարությունների և կենտրոնական բանկերի կողմից իրականացված միջոցառումները:

Եվրոպական կենտրոնական բանկին հաջողվել է բեկում մտցնել ֆինանսական շուկաներում և շեշտակիորեն նվազեցնել պորտուգալական, հունական, իսպանական, իռլանդական և իտալական



պետական պարտատոմսերի եկամտաբերությունները: Միևնույն ժամանակ, Իռլանդիայի և Պորտուգալիայի կառավարություններն արձանագրել են լուրջ առաջընթաց՝ պետական բյուջեի պակասուրդի կրճատման ուղղությամբ:

2012 թվականին ԱՄՆ-ում ի վերջո սկսվել են պետական պարտքի և բյուջեի պակասուրդի նվազման ուղիների վերաբերյալ քննարկումները: Ավելին՝ առաջատար կուսակցություններին հաջողվել է մասնակի համաձայնության գալ հարկերի բարձրացման հարցի շուրջ:

Արմատական տեղաշարժ է արձանագրվել նաև Ճապոնիայում, որի կառավարությունը որդեգրել է աննախադեպ խթանող քաղաքականություն՝ միջինժամկետ հատվածում 2% գնաճ ապահովելու նպատակով: Այս քաղաքականության արդյունքում սկիզբ է առել ճապոնական իենի արժեզրկման միտումը, որը 2013 թ. կարող է դառնալ արժութային շուկայի ամենանշանավոր իրադարձությունը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին Կենտրոնական բանկը արտաքին հաշիվների վիճակագրությունը կազմել է նոր ձեռնարկին (BPM6) համապատասխան: Մշակվել են տվյալների վերանայման սկզբունքները, սկսվել է պատմական շարքերի վերանայումը, որոնց առնչվող աշխատանքները կավարտվեն 2013 թվականին:

2012 թվականին Կենտրոնական բանկը վերանայել է ֆինանսական կազմակերպությունների հաշվային պլանը, ԿԲ ներկայացվող հաշվետվական ձևերի լրացման, ֆինանսական տեղեկատվության ամփոփման և վերամշակման մեթոդաբանությունները: Նոր հաշվային պլանի հիման վրա իրականացվել են դրամավարկային և ֆինանսական վիճակագրության կատարելագործման աշխատանքներ՝ հնարավորություն ընձեռելով դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունը կազմելու ավելի մանրամասն ու ընդլայնելու հրապարակվող վիճակագրական տվյալների շրջանակը:

2012 թվականին վիճակագրության վարչությունը ստանձնել է մի շարք լրացուցիչ գործառույթներ, մասնավորապես՝ ֆինանսական (արժեթղթերի և արժութային) շուկայի վերաբերյալ տեղեկատվության ամփոփման և հրապարակման գործառույթը և Կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, մշակման և հրապարակման գործառույթը, որի արդյունքում վերանայվել են համապատասխան ամփոփ տեղեկատվության կազմման և հրապարակման մեթոդաբանությունները:




Հայ անվանի բանաստեղծ, աշուղ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի կապակցությամբ 2012 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է ոսկե հուշադրամ »

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ »


2012 թվականին ՀՀ ֆինանսական համակարգը շարունակել է ցուցաբերել դինամիկ զարգացման միտումներ՝ ռիսկերը պահպանելով կառավարելի շրջանակներում:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 89.7%-ը:




Տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 19.5%-ով, ընդհանուր կապիտալը՝ 10.3%-ով, ընդհանուր պարտավորությունները՝ 21.4%-ով: Բանկային համակարգի շահութաբերությունը ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE) կազմել են համապատասխանաբար 1.9% և 11.2% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 1.8% և 9.8%): 2012 թվականի ընթացքում ևս արձանագրվել է բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշների զգալի աճ: Բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցության և բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշներն աճել են 8.1 և 7.0 տոկոսային կետերով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 62.2% և 38.6%:

Ֆինանսական միջնորդության մակարդակը




Աճել են նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հիմնական ցուցանիշները: Մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 34.2%-ով, պարտավորությունները՝ 37.2%-ով, ակտիվները՝ 36.1%-ով: Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը նվազել է 1.7%-ով, պարտավորություններն ավելացել են 40.9%-ով, ակտիվները՝ 22.0%-ով: Ներդրումային ընկերությունների կապիտալն ավելացել է 17.6%-ով, պարտավորությունները՝ 6.1%-ով, ակտիվները՝ 8.2%-ով[7]:

Ֆինանսական միջնորդության մակարդակը ԱՊՀ երկրներում*



*Աղբյուրը՝ Ազգային (կենտրոնական) բանկեր, Ազգային վիճակագրական ծառայություններ

[7] Ֆինանսական համակարգի կայունության, վերահսկողության և կարգավորման մասին մանրամասն տե՛ս «Հայաստանի ֆինանսական համակարգը (2012 թ.). զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» և «Ֆինանսական կայունության հաշվետվություն (2012 թ.)» պարբերականներում (www.cba.am):



Ֆինանսական համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովման խնդրի ներքո՝ 2012 թվականին Կենտրոնական բանկի հիմնական շեշտադրումները եղել են.

• *Ֆինանսական կայունության ապահովումն ու զարգացումը.* 2012 թվականին Կենտրոնական բանկը անցկացրել է **ճգնաժամային կառավարման սիմուլյացիոն խաղեր**, որտեղ ներգրավված են եղել Կենտրոնական բանկի տարբեր ստորաբաժանումների ու առևտրային բանկերի համապատասխան մասնակիցներ (մասնակցությունը կօգնի համապատասխան կողմերին պատրաստ լինելու արտակարգ իրավիճակների ժամանակ որոշումների արագ կայացմանն ու անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը): Կատարվել են **Բազել 3-ի** ներդրման աշխատանքներ, մասնավորապես՝ բանկերի կապիտալի որակի բարելավման, իրացվելիության, ռիսկի կառավարման նոր մոտեցումների ներդրման, կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչը նպատակ ունի ամրապնդելու բանկերի վճարունակությունը ու, ընդհանուր առմամբ, ֆինանսական կայունությունը: Շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ **ռիսկերի վրա հիմնված վերահսկողությունը** միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու, ֆինանսական կազմակերպությունների ռիսկայնության գնահատման նոր գործիքների մշակման ու արդյունավետ կիրառման աշխատանքները: Շարունակվել են նաև **ֆինանսական խմբերի/կոնգլոմերատների նկատմամբ համախմբված վերահսկողության** իրականացման օրենսդրական դաշտի մշակման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա գնահատելու ֆինանսական խմբերի/կոնգլոմերատների ռիսկայնության մակարդակը՝ որպես մեկ ամբողջություն, ինչպես նաև սահմանափակելու ռիսկային ներխմբային գործարքների բացասական ազդեցությունը խմբի անդամ կազմակերպությունների ֆինանսական դրության վրա: 2012 թվականին Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում են եղել **կենսաթոշակային բարեփոխումները**: Կենտրոնական բանկը բանակցություններ է վարում ակտիվների՝ օտարերկրյա հեղինակավոր և փորձառու կառավարիչների հետ, որպեսզի վերջիններս ներգրավվեն պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարման մեջ: Շարունակվում են նաև կարգավորման դաշտի ձևավորման աշխատանքները:

• *Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանություն.* Կենտրոնական բանկի խնդրանքով Համաշխարհային բանկը գնահատել է ՀՀ-ում սպառողների շահերի պաշտպանության և սպառողների ֆինանսական գրագիտության մակարդակը: Դրա հիման վրա **մշակվել են Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական գրագիտության բարձրացման ռազմավարություններ**: Ֆինանսական ոլորտի կրթման ազգային

ռազմավարության մշակման և իրագործման նպատակով ստեղծվել է **միջգերատեսչական հանձնաժողով**, որին անդամակցում են մի շարք պետական, հասարակական և մասնավոր կառույցներ: 2012 թվականին շարունակվել են «Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայքի **(www.abcfinance.am)** զարգացման աշխատանքները՝ յուրաքանչյուրին պարզ և մատչելի ուսուցանելու համար ֆինանսների ոլորտի մանրամասները: Սկսվել է բնակչության **ֆինանսական կրթման նոր խաղի («Ֆինանսիստ»)** ծրագրավորումը և մշակումը, որի նպատակն է խաղի միջոցով բնակչությանը ուսուցանել գործնականում ֆինանսական գործիքներից օգտվելու համապատասխան գիտելիքներ: Բնակչության ֆինանսական կրթման համատեքստում իրականացվել են **կենսաթոշակային համակարգի բարեփոխումների լայնամասշտաբ լուսաբանման շարունակական միջոցառումներ:** Շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի ու հրապարակվող տեղեկատվության արժանահավատության նկատմամբ վերահսկողական ստուգումները:

2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի վերանայման և կատարելագործման աշխատանքները:

2012 թվականին Ազգային ժողովի հավանությանն են արժանացել և ընդունվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից առաջարկված փոփոխություններն ու լրացումները հետևյալ ՀՀ օրենքներում՝

- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում,
- «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում,
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում,
- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում,
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում,
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում,
- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում,
- «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքում (շարադրվել է նոր խմբագրությամբ),
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում,
- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում,
- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում,
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում:



Օրենսդրական այս փաթեթը նպատակ ուներ լուծելու կուտակային կենսաթոշակային նոր համակարգի ներդրման ընթացքում բացահայտված մի շարք խնդիրներ և խթանելու այս ոլորտի հետագա զարգացումը: Նշենք փոփոխություններից մի քանիսը:

Կենսաթոշակային ֆոնդերի վերաբերյալ գովազդ համարվող տեղեկատվությունն այսուհետև ենթակա չի լինի համաձայնեցման Կենտրոնական բանկի հետ և Կենտրոնական բանկ կներկայացվի հետգրությամբ: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման պարգևավճարի առավելագույն չափը կախված կլինի ոչ թե ֆոնդի ակտիվների շուկայական, այլ զուտ ակտիվների արժեքից, ինչը հնարավորություն կընձեռի կանխելու ֆոնդի ակտիվների արհեստական մեծացումը: Փոփոխությունների արդյունքում կամավոր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցներին հնարավորություն է տրվել վաղաժամկետ (մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը) հետ ստանալու իրենց կուտակած միջոցները՝ իհարկե նման դեպքերի համար սահմանվել են որոշակի սահմանափակող պայմաններ: Կամավոր կենսաթոշակային ֆոնդերը, ինչպես և պարտադիրները, կարող են լինել միայն բաց ֆոնդեր՝ հնարավորություն ունենալով ցանկացած ժամանակ ներկայացնելու իրենց փայերի փոխանակման պահանջ: Ֆոնդի կառավարչի գործունեության օպերատիվությունը բարձրացնելու նպատակով սահմանվել է, որ կառավարչի կանոնները չեն գրանցվելու ՀՀ ԿԲ կողմից, այլ ընդունվելու են ի գիտություն: Ֆոնդի ակտիվների հաշվին ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցվելու են ներդրումային ֆոնդի կառավարչի անունով, որը հանդես է գալիս ֆոնդի մասնակիցների անունից, և ֆոնդի մասնակիցների փոփոխությունը չի հանգեցնի գրանցման վկայականի փոփոխության: Հստակեցվել է, որ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման կամ հետգնման արդյունքում ստացված վճարների մասով գործարքներն ազատվում են ԱԱՀ-ից[8]:

Տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների զարգացումների ներքո Կենտրոնական բանկը 2012 թվականին իրականացրել է նաև մի շարք ենթաօրենսդրական փոփոխություններ:

[8] *Այս փաթեթով նախատեսված փոփոխությունները մանրամասն տե՛ս «ՀՀ ԿԲ բանբեր» պարբերականում (www.cba.am):*



Ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական հաստատությունների գործունեության ռիսկայնության թույլատրելիության աստիճանի բացահայտման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վերջիններիս նկատմամբ իրականացնել վերահսկողություն, որը կարող է լինել փաստաթղթային և տեղերում (ֆինանսական հաստատություններում):

Հեռակա վերահսկողության հիմնական նպատակն է ֆինանսական ինստիտուտներից ստացված հաշվետվությունների հիման վրա իրականացնել վերջիններիս ֆինանսական գործունեության մշտադիտարկում, ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություններ, բացահայտել անթույլատրելի ռիսկերը, գործունեության համապատասխանությունն իրավական դաշտին ու, անհրաժեշտության դեպքում, արագ արձագանքել:

Տեղերում ստուգումներն իրականացվում են ինչպես բոլոր ուղղություններով (համալիր ստուգումներ), այնպես և նպատակային (կոնկրետ գործունեության ստուգում): 2012 թ. Կենտրոնական բանկի կողմից իրականացվել են 243 «տեղերում ստուգումներ», մասնավորապես՝

- բանկերում բոլոր ուղղություններով՝ 5, նպատակային՝ 8 ստուգում,
- վարկային կազմակերպություններում բոլոր ուղղություններով՝ 5, նպատակային՝ 1 ստուգում,
- ապահովագրական ընկերություններում բոլոր ուղղություններով՝ 3, նպատակային՝ 12 ստուգում,
- ներդրումային ընկերություններում բոլոր ուղղություններով՝ 3, նպատակային՝ 1 ստուգում,
- ֆինանսական շուկայի այլ մասնակիցների՝ 205 ստուգում (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն):

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները կանխվել են:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման և հուսալիության ապահովման, անկանխիկ վճարումների զարգացման աշխատանքները[9]:

Մանրածախ վճարումներն անկանխիկ եղանակով իրականացնելու գործընթացում կարևորվում է քարտային բնագավառի զարգացումը և «Արմենիան Քարդ» միասնական վճարային համակարգի կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնումը, ինչը կխթանի նաև ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների աճին:

«Արմենիան Քարդ» միասնական վճարային համակարգի տեղեկատվական անվտանգության մակարդակի և հուսալիության բարձրացման, ինտերնետային վճարային համակարգի հզորացման նպատակով «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն շարունակել է համակարգի վերազինման՝ նոր ծրագրային հենքին անցման աշխատանքները: Անցումը նոր ծրագրային հենքին էականորեն կբարելավի համակարգի աշխատանքը և քարտապանների սպասարկումը, կապահովի համակարգի թողունակության բարձրացումը, որը հնարավորություն կտա զարգացնելու էլեկտրոնային առևտուրը և սահմանափակելու հնարավոր ռիսկերի առաջացումը:

2012 թվականից ՀՀ տարածք մուտք են գործել «Diners Club» վճարային համակարգի քարտեր: Հաշվետու տարվանից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր դարձավ նաև ինտերնետ միջավայրում «Visa» վճարային քարտերի սպասարկումը, ինչը տնտեսավարող սուբյեկտներին կընձեռի ավելի լայն հնարավորություններ՝ իրականացնելու էլեկտրոնային առևտուր:

Հաշվետու տարվա ընթացքում երկու վճարահաշվարկային կազմակերպություններ ստացել են էլեկտրոնային փողերի թողարկման թույլտվություն, ինչն էապես կնպաստի Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողերի միջոցով վճարումների իրականացման ոլորտի, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի զարգացմանը:

[9] *Վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր», «ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» և «ՀՀ ֆինանսական կայունության հաշվետվություն» պարբերականներում, որոնց կարելի է ծանոթանալ ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում՝ www.cba.am:*



2012 թվականին Կենտրոնական բանկում շարունակվել են նոր վճարային համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող վճարային համակարգերի կատարելագործման աշխատանքները, որոնց նպատակը մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների ընդլայնումն է և դրամավարկային քաղաքականության ճկուն գործիքակազմի ապահովումը:

Հաշվետու տարում շարունակվել է «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ներդրումը: Համակարգը ապահովելու է Կենտրոնական բանկի և համակարգի մասնակիցների միջև պետական և կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման, կատարման և մարման, ինչպես նաև դրանց հետ կապված հաշվարկների իրականացման, միջօրյա իրացվելիության տրամադրման և այլ գործառնությունների ավտոմատացումը:

Իրականացվել են Էլեկտրոնային վճարումների համակարգի կատարելագործմանը նպատակաուղղված աշխատանքներ, ներդրվել են նոր էլեկտրոնային հաղորդագրություններ՝ զարգացող ֆինանսական շուկայի պահանջներին համապատասխան: Նոր էլեկտրոնային հաղորդագրությունների տեսակները հնարավորություն են տալիս իրականացնելու միջբանկային փոխանցումներ (այդ թվում նաև՝ երրորդ անձանց անունից), բյուջետային վճարումներ, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում համապատասխան հաշվարկների իրականացման հետ կապված փոխանցումներ և այլն:

Կատարվել են նաև Էլեկտրոնային վճարումների համակարգի գնահատման աշխատանքներ: Դրանց հիման վրա մշակվել է միջոցառումների ծրագիր, որը ներառում է՝ համակարգի զարգացման գործընթացների ապահովումը, համակարգում հնարավոր ռիսկերի բացահայտումն ու գնահատումը, մոնիթորինգի և նպատակային վերլուծությունների իրականացումը, համակարգի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի արդիականացումը, համակարգի գործարար անընդհատության ապահովումը և այլն: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2014 թվականին:

Կենտրոնական բանկի աջակցությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան շարունակել է «Depend» համակարգի ներդրումը: Համակարգը նախատեսված է դեպոզիտարիայում կորպորատիվ արժեթղթերի պահառության, ինչպես նաև համակարգով կատարված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար: Համակարգի ներդրումն էականորեն կբարձրացնի համակարգով կատարվող գործարքների հաշվարկների արդյունավետությունը, հնարավորություն կտա ընդլայնելու մատուցվող ծառայությունների ցանկը:


ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ազգային արժույթի շրջանառության կարգավորման ոլորտում Կենտրոնական բանկի գործունեությունն ուղղված է եղել տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորվող պահանջարկի՝ ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի, որակի և ժամկետների բավարարմանը: Կարևորվել են այդ պահանջարկի բավարարման հետ կապված մի շարք պայմաններ՝ հուսալիությունը, հարմարավետությունը, օպերատիվությունը, անընդհատությունը և այլն:

Կենտրոնական բանկն իր հաճախորդների դրամարկղային սպասարկումը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում իրականացրել է Երևանում գտնվող գլխավոր գրասենյակի դրամարկղի և Գորիսի, Վանաձորի, Հրազդանի տարածքային դրամարկղային կենտրոնների միջոցով:

2012 թ. Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12.4%-ով: Կենտրոնական բանկի տարածքային դրամարկղային կենտրոնների միջոցով ապահովվել է Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության 21.0%-ը:

Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2012 թ.



Տարվա ընթացքում կատարվել են նաև Դիլիջանում Կենտրոնական բանկի նոր դրամարկղային կենտրոնի կառուցման, կահավորման և տեխնիկական զինման աշխատանքներ:

Առաջնորդվելով միջազգային լավագույն փորձով՝ Կենտրոնական բանկը շարունակել է իր հաճախորդների դրամարկղային սպասարկման հետ կապված գործառնությունների ավտոմատաց-




ման աշխատանքները: 2012 թվականին շարունակվել են Կենտրոնական բանկում կանխիկով գործառնությունների կառավարման միասնական տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները՝ ուղղված գործառնությունների ավտոմատացմանը, մինչ այժմ գործող էլեկտրոնային համակարգերի միավորմանը, տվյալների միասնական բազաների ստեղծմանն ու մշակմանը:

Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի ծավալը 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 440.1 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 10.4%-ով): Կանխիկ դրամի տեսակային կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել, հիմնականում շարունակվել են նախորդ տարիներին դրսևորված միտումները: Մասնավորապես՝ բարձր է եղել 20000 դրամ և 100000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների նկատմամբ պահանջարկը: Շրջանառության մեջ գտնվող 20000 դրամ անվանական արժեքով թղթադրամի ծավալն ավելացել է 17.0 %-ով, իսկ 100000 դրամ անվանական արժեքով թղթադրամի ծավալը՝ 28.4%-ով: Մեծացել է նաև դրանց տեսակարար կշիռը Կենտրոնական բանկից դուրս կանխիկի մեջ:

Մյուս անվանական արժեքներով թղթադրամների տեսակարար կշիռը, ինչպես և նախորդ տարի, Կենտրոնական բանկից դուրս կանխիկի կառուցվածքում նվազել է:

Շրջանառության մեջ առավել բարձր տեմպերով ավելացել են 20 և 50 դրամ անվանական արժեքներով մետաղադրամների ծավալները:

Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 2010 - 2012 թթ.





Շարունակելով ՀՀ թղթադրամների շարքի նույնականացման աշխատանքները՝ 2012 թ. շրջանառության մեջ են դրվել նոր նմուշի 5000, 10000 և 20000 դրամ անվանական արժեքներով թղթադրամներ: Դրանք 100000 դրամ և 2011 թ. թողարկման 1000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների հետ միասին կազմում են նույնականացված ՀՀ թղթադրամների շարքը: Վերջինիս ստեղծման նպատակն է միևնույն սկզբունքները սահմանել տարբեր անվանական արժեքներով թղթադրամների արտաքին ձևավորման, պաշտպանական հատկանիշների, համարակալման և այլնի համար: Նույնականացումն ավելի դյուրին կդարձնի թղթադրամների իսկության ստուգման գործընթացը, կհեշտացնի հանրության կողմից պաշտպանական հատկանիշների ճանաչումը:

Ըստ Կենտրոնական բանկի ռազմավարության՝ ազգային արժույթի թողարկման և դրամաշրջանառության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի խնդիրներից է նաև հասարակության շրջանում Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների տարածումը:

2012 թվականին Կենտրոնական բանկը մասնակցել է մի քանի միջազգային դրամագիտական ծրագրերի, որոնց շրջանակում թողարկված 13 տեսակի հուշադրամներն իրացվել են աշխարհի տարբեր երկրներում: Բացի այդ, 2012 թվականին թողարկվել են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանին և 10 մարզերին նվիրված՝ 50 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամներ, որոնց տեխնիկական բնութագրերն ու դարձերեսի պատկերը նույնն են, ինչ որ՝ նույն անվանական արժեքով շրջանառու մետաղադրամներինը, սակայն դիմերեսին ներկայացված են Հայաստանի Հանրապետության մարզերի և մայրաքաղաք Երևանի ամենաճանաչված պատկերները:

2012 թվականին շարունակվել է «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամների թողարկումը: «Նոյյան տապանը» Կենտրոնական բանկի կողմից թողարկված առաջին և միակ ներդրումային դրամն է, որի հատումն ու իրացումը կազմակերպում է գերմանական «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերությունը: Այն թողարկվում է ¼, ½, 1, 5, 10 տրոյան ունցիա, 1 և 5 կգ քաշերով: 2012 թվականի դեկտեմբերի 4-ին արձանագրվել է 2011-2012 թթ. թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամի 1 միլիոներորդ վաճառքը:

Ինչպես նախորդ տարիներին, 2012 թվականին ևս Կենտրոնական բանկը թողարկել է համահայկական և համաշխարհային նշանակություն ունեցող իրադարձություններին նվիրված հուշադրամներ: 2012 թվականի հունիսի 4-ին Մոսկվայում կայացած «Դրամների համաստեղություն-2012» հուշադրամների 6-րդ միջազգային մրցույթում 2011 թվականի թողարկման «Հայաստանի խաչքարերը» 6 արծաթե հուշադրամներից բաղկացած շարքը «Տարվա հավաքածու» անվանակարգում արժանացել է 2-րդ մրցանակին, իսկ «Արտաշատի հիմնադրման 2200-ամյակ» ոսկե հուշադրամը «Տարվա հուշադրամը» անվանակարգում արժանացել է 3-րդ մրցանակին:

2012 թվականին շարունակվել է ՀՀ դրամանիշերը լուսաբանող նյութերի («Հայաստանի Հանրապետության հուշադրամներ 2011» տարեկան պարբերական, բուկլետներ, այլ նյութեր) հրատարակությունը, ՀՀ կենտրոնական բանկի կայքում նորացվել և թարմացվել են ՀՀ դրամանիշերին նվիրված բաժինները:

